

պարտաւորութիւնը առաջարկել այդ իր ամենախոնարհ խնդիրը բարեխնամ տէրութեանը և բոլոր հանգամանքները մի առ մի բացատրելով, ներկայացնել տէրութեան բարեհաճ տնօրէնութեանը՝ դարման անել տառապեալ և հալածված խեղճ հայ ազգի թշուառ փնծակին։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆՈՒՄՆ

Գիտական յօդուածները օգուտը մեզ ամենին յայտնի է. բայց թէ որչափ նրանք անհրաժեշտ են մեզ համար՝ այդ ամենը լատենականում չեն։ Սեր Ժողովրդի մէջ ձիշդ գիտութիւններով պարագող և հետաքրքրվող մարդիկ շատ քիչ կան—մինչև անգամ այն մարդիկ, որոնց յանձնված է Ժողովրդին մատուցել կերակուր մատակարարելը, նրանք էլ չեն ուսումնասիրում գիտութիւնները և հետեւում նրանց զարգացման։ Սեր համար շատ հեշտ է ստել Ժողովուրդը խաւար է, Ժողովուրդը ագէտ է, և խնայն աւելացնել պէտք է նրան լուսաւորել, պէտք է նրան զարգացնել։ Իսկ ցոյց տալ թէ ինչպէս պէտք է հասնել այդ նպատակին և զործնականացնել անձամբ կատարել—այդ շատ քիչերն են փնծակները։

Ժողովուրդը տեսնում է անձրեւ է գալիս, ամպերը որոտում են, կայծակը փայլում է, երկրաշարժ է լինում, լուսինը խաւարում է, երկրի բերքը պակասում է, իրեղենները թանկանում են, խաղողը փռոտանում է, երեւ-

հանում ազանութիւն խիլի չունեն խիղճը ու տանուլաւն էլ չեն խնայում, օգուտը ամուլի մէջ պարզ կրնա էր դուռ էլի, օգուտը մէ բաւում էր էնպէս ազատվի։ Գլուխը քարը տայ, ասում էր, սաքիչի տաս մանկիւն էլ, մարթիւ ալված իրիք մանկիւն էլ. դիւի իր անկիւն լուսնումն կու հանէր, իր ասդի ձէրեմէն կու քաղէր։ Ասա՝ դրամ հիմի ինչ անէ, վուր էն իրիք մանկիւն էլ դնաց, էն տասն մանկիւն էլ ու տասն էլ ուրիշ էր դնում. էս խօս խաւար խայտառակեցաւ։ Հիդն էլ էն անիծած գեներալ զամբու ծիծաղն ու հանաքները, վուրը Մակաիօն շատ փայցին իր վրա էր վիւրանում, շատն էլ հէնց դիզէր իր վրա չէ։

Վուրց կու վրչանէր էն անիծած լօտօն նրա գլխի համա, ինչ կուէր վրչը, ինչ կու պատահէր. դիւի էս փրերիւնէն էր արօրվում խիղճը ու էստուրը շատ ջէր տարածն էլ չէր մաշուր անում, էնէնց վուր կշարն նստած մէ նեմիս ակն չըկայ միդին էլ էր գալի ու նա օտկում խանդիւրան Մակաիօն։

Ել չէր դիզել խիղճը ուր միդ զնէ, ուր քիթը գայ իր բերքախտութիւնը. իր անկարա սրտումը ոչովու գունահը չէր մտնում, ոչով միդավուր չէր դուռ գալի, Կնքն իրան էր միդ դնում, վուր իր չլումը չը կացաւ, վուր միծաղանքներու մօզ նստիլ ուզից, վուր էլիլ էր ու սրանց մէջը ձգվիլ, վուր մէ կէս սահաթ առաջ մէ քիչ տանելու ուսիկ անաւ թէ չէ, հայ հարայ ջէր դրուտ չը տարած փուղերով իր էրեխի համա ինչոր խօտացաւ աւանիւ ու ինչու վրչը մէ մուլափ չէրիտ տեսիլ էր, թէ Աստուծ վուրց է վրչացնում բանը։

Չէնց էստու համա էլ Աստուծ պատժում էր, կարծում էր Մակաիօն։

Չէ, հախս է, ասում էր իր մտկումը. այ էսէնց կու սիւնայ էրեւոյ։

Միդայ էր գալի Աստուծան էլ, Սուրբ Սարգիսն էլ, Աստուծանին էլ խէչերուն ու սրբփերուն էլ ու ուրիշ վուրչիլ չէր ուզում, ուրիշ վուրչիլ չէր աղանչաք անում, օգուտը մէ ջէր

լում են հիւանդութիւններ և այն և այն Ժողովրդին այդ բոլոր թէ օրերուլթաբա՝ նական, թէ առօրջապահական և թէ տնտեսական երեղթները անհասկանալի են. բայց մի և նոյն ժամանակ շատ հարկաւոր է նրանց բացատրել և պարզ հասկանալու։ Ում դառնայ նա իւր այդ պահանջներին լուսն և բաւականութիւն տալու համար,—քահանային թէ պարոյի ուսուցչին,—դրանք իրանք չեն հասկանում այդ երեղթները և չեն կարողանում բացատրել նրանց պատճառները, ուր մնաց, որ Ժողովրդին սովորեցնեն, նրա պահանջներին բաւականութիւն տան։ Լաւ է, եթէ դրանք իրանց աղիտութեամբ աւելի էլ չը շփոթեն Ժողովրդին և նրա նախապաշարմունքների վերա չաւելացնեն նոր առասպելներ։

Ժողովուրդը բացում է իւր գաւակների համար դպրոց, հրաւիրում է ուսուցիչներ, տալիս է նրանց հսկողութեանը և կրթութեանը աշակերտներ և սպասում է հետեւանքին... Եւ ահա անցնում են օրեր օրերի վերա, անցնում են մի քանի տարիներ,—ու աշակերտները աւարտում են իրանց ուսումը։ Կարգական գրասեղանը թողնում են նրանք առանց մի մտաւոր պաշարի և բխայրած ընդունակութիւններով։ Բաւական չէ, որ նրանց ուսումնարանում չը տուին կրթութիւն և կեանքի պատրաստութիւն, նրանց մէջ չը զարգացրին մինչև անգամ սէր և ընդունակութիւն ազագայում պարտպելու և ինքնուրոյն զարգանալու։ Բայց դիցուք թէ ունենք ուսումնարան, որ կարողանում է բաւականին մտաւոր պատրաստութիւն տալ աշակերտներին, կարողանում է նրանց հասցնել ինքնուրոյնութեան և մտցնել նրանց մէջ սէր և ձգտում դէպի ազատից զարգացում։ Հարցնում է արդեօք կարող էր լինել այդ թարմ ոյժերը զօրանալ, այդ աղին ձգտում ներք գտնել իրանց համար պատշաճաւոր ճանապարհ և այդ մանուկ հետաքրքրութիւնը կարող էր լինի սասնալ իրան բաւա-

մայինց տանէ, վուր իր տասիրիք մանկիւնէն աւելի պարտք չը դնի վրէն, վուր էրեւոյ չը սիրաւ էս սիւն էրեւոյնու մօզ։

Ամա դուռն չը մտնիւ, էս խաղն էլ անց կացաւ. ովոր տարաւ էլի մէ թուանը ու իրան Մակաիօն մէ մանէթ էլի նուր պարտք աւելցաւ։ Վստան ու էրկուսով իս հիմի տասն նրան կաշնայէին ու խիղճս հէնց դիզէր օծորքը գլխին ծած էկաւ...

Այ հօրէս դիւի մօշու կուլի, հօրէս դիւի մէտի կու ծած ննքին, կու հանին իրանց պօրտմունէքը. վուրը տարած փուղերը մէջը կօծին, վուրը տանուլովածը կու բաժնէ։ Ինքն ինչ անէ, ինքն էլ կու հանէ իր պօրտմունէն, իրիք մանէթը խօտված ունէ, տասն էլ կու տայ. իժում մնացած ինր մանէթն ով տայ, վուրց տայ ումը կու մնայ տալարու. կուլի հէնց դէմուդէմի գեներալ դամիւրուն. նրանց մասխարա սիւտի դառնայ, սիւտի էրեխին ասին, վուր թէ չունէիր ուր էիր նըստում միդ մօզ, ես խիլ էլ չուլին, ասին էս էլ քիդ ինք բախիլ չունէր չունիւ. էս խօ մատով շանց տալու դառաւ, էս խօ բէղան էլաւ աշխրբումը. ես կուլի ինքը ձալուն մէջ ննքին, նա տայ նրա մաղիէր, էս խօ գեղերը մտաւ, էս խօ էլի էն դուռ էկաւ. էլ սաքիչէն ուր էր դրու գնում, էլ էսպապա ուր էր տանվում...

Այ, ախ, ինչի մէնակ չէ, ինչի մաղիր չէ գլխում, ինչի անկիրը ասողով չէ ծակծկում, ինչի դուրը միքատով չէ դուռ քշիւրում, ինչի գեղերը չէ ծած գալի ու օծորքը գլխին չէ փուլ գալի, ինչի գեղերը չէ պատմում ու իր թափլափիւն գլուխը չէ դէվեր տանում...

Էս հալումն էր իմ խիղճ Մակաիօն, վուր դէմուդէմի գաւաքը նուր մէկանց կցեցին իրանց ծիծաղն ու հանաքները։

Էս գաւաքը, էլ խիլի չին խնայում Մակաիօն, էրեխին էր ծիծաղում... դրուտ, դրուտ իրան Մակաիօն ին մասխարա գցում... Այ, էլի ինչոր քշիւրացին, ինչի էլ ասին մէկ մէկու ու իրան մտիկ արին, այ հիտու ախիլի-

կանութիւն։ Ուր են այն միջոցները, որոնցով կարողանայ այդ նոր ոյժը զարգանալ, ուր է այն նիւթը, որից պէտք է կազմվի մարդու մտաւոր պաշարը։

Պէտք է տալ մտաւորական նիւթ, և թէ կամենում ենք, որ աշակերտներ իրանց ուսումը և զարգացումը շարունակեն ուսումնարանից դուրս գալուց յետոյ։ Պէտք է աշխատենք զօրծնական և տնտեսական հարցերով պարագեցնել նրանց—պատրաստել նրանցից կեանքի մարդիկ—ցոյց տալ, որ առաջարկված ուսումը միայն մի շքեղութեան առարկայ չէ, այլ նա սիրա կապում է մարդու կենցաղով, վարութեան հետ և կարող է պատճառել մեծ դիւրութիւններ թէ զօրծնական կեանքի մէջ, և թէ բաւականութիւն տալ մարդկային մտքի հետախուզութեան, լայնացնել մարդու աշխարհահայեացքը։

Իսկ ազատել մարդու միտքը նրան կաշկանդող նախապաշարմունքներից և սնտկաբանութիւններից, տալ մարդուն կարողութիւն հասկանալու իրան շրջապատող բնութեան երեղթները, բացատրելու կենսական հարցերը և վճռելու տնտեսական տարաբնույթները—այդ այնքան աննշան բաներ չեն, որ նրանց վերա մենք մոռանալք մեր ուշքը դարձնելու։

Ազագայ զարգացումը, շարունակվող կրթութիւնը և զօրծնական կեանքի պատրաստութիւնը,—ահա մեր նպատակը։ Այդ նպատակին հասնելու համար ուսումնարանը ունի մեծ նշանակութիւն, իբրեւ տարրական կրթութեան միջոց, իբրեւ ազագայ զարգացման հիմքը զնոյ գործիչ արհեստագործական և երկրագործական պարագմունքները, եթէ մի ժամանակ դուռ բերվին մեղանում, կը տան մարդուն աշխատանքի կարողութիւն և կեանքի ապրուստ—իսկ նրա մտաւոր կրթութիւնը շարունակող միջոցները կարող են լինել հասարակական դաստիարակութիւններ և գիտութիւնների Ժողովրդացումն սպազորական խօսքով։ Այս վերջինների վերա էլ հէնց

բանցն էլ ինչոր նշանալի խոսք արին...

Մէ բաշ, մէ վէշու գամէշ գամա, վուրի սիւսի մինձ անկիրը դարձի գամիչ անկիրու նման էր դրուտ ու վուրի ծառվին լիմօնաջն ու արչաւորը օխտաւ չէին գալի,—սաքիչով սառը ջուր ուղիւ։ Էստուրը դնգը գեներալ գամէն տաւ, վուր էրեղթէն սաքիչով ուժիմօ ոտըը կուլի, կուտ, ու նեմիս ծիծաղեցաւ։

Մակաիօն սիրտը կինադամ պատռվեցաւ. դնգը գամէն կի թէթիւ հազայ ու իժում նա ու բուրթի գեներալ գամէն մէ փիւ ծիծաղ վիւր արին, վուր էս ծիծաղը բերնէ բերանն անցեցաւ ով գիւղէր խիղճ Մակաիօն խաւարը։

Ել խիւլ չը կայ, խաղիլ ին, դիզին իր սաքիչի բանը. էս ին ծիծաղում, էս ին մասխարա գցում. գիւլի լուս ննգաւ, դիւրուքը յօրէս կու թքին էրեխին. մարթն էլ կու խնայայ, ննգաւ նրա ածկա տակը, ծեծվեցաւ, սպանվեցաւ... Թաթէն օրթումը փօթուրի է... հա, հա, այ աշխարա նրա անունն էլ քնթիւնթաջին, Ալէքսանդրաթն էլ ինչեցին...

Ել չը դիմցաւ իմ խիղճ Մակաիօն. հէնց դիւրէ մաղիւրմէն գիւլի քաշեցին, լօտօն գնաց ու էկաւ, առանք ծած ննգաւ, օծորքը գլխին փուլ էկաւ...

Մակաիօն սիրտը գնաց...

Նրանք ջէր էլի գնջրավում էին, վուր Մակաիօն թուլացած ննգած էր սկսում վրա։

Խիղճ Մակաիօն...

Չէայ ջուր, հայ օտկեցէք, հայ մէ դէսը մտիկ արէք... ննգաւ օրթանօրէն. փաթիլվեցան մէ քանիքը Մակաիօնի գլխին. վուրը ձեռնորն էր քաշքշում, վուրը անգծնիրը. գզգզեցին խիղճին, գրուր մօշու արին, դէրիէն սրտաբաշցին, չիւքիէն մաս մաս արին, էրեւ գաւաթիկա ջուրը վրէն դարդիկեցին, դրչեցին, խաւար արին, փաշարին իմ նազ ու ջէլիւրան Մակաիօն, իմ իրգնային Մակաիօն։

Մէկմէկաւ քիթը՝ էն դուռն արին, էս դուռն՝ կուտ, դուռնալով, ծիծաղ, ընդունաւ... դուռն ննգաւ բիծաւ Ալէքսան իր օխտալմէն, դուռ վազեցաւ վարինկէն ստալափումէն մարմարի գզալը

մեր միտքն է խօսել այս յօդուածում։

Հասարակական դաստիարակութիւնները կարող են մեծ նշանակութիւն տալ միջոցով մէջ, եթէ նրանք միշտ կարողանան ձիշդ և կարեւոր տեղեկութիւններ հաղորդել առօրեայ կեանքի երեղթների վերա և վճռել զանազան տնտեսական հարցեր, որոնք ունեն ժամանակակից նշանակութիւն։ Վեր ասենք, օրինակ, այս տարուայ Կովկասում Քիթիւնի մօտ մերիկի երեւալը։ Այդ մերիկը, ինչպէս կարողացնէ լրագրելում, դեռ իր զարգացման սկզբումն էր, այսինքն այն դրութեան մէջ, երբ դեռ նա թռչել չէ կարողանում (որին անուանում են հետեւի) և երբ նրան ամենայարմար ժամանակն է կոտորել։ Լաւ է, որ բազմի մի առանձին բերմունքով, այդ մերիկը բաւականին փրչացաւ. բայց միթէ կարող չէ մի և նոյնը լինել եկող տարի, կամ երբ և իցէ։ Արդեօք մէկը մտածեց մի հասարակական դաստիարակութիւն կարգաւ մերիկի վերա, նրա աճման, զարգացման, տուած վնասների և յետոյ նրան կոտորելու և փչացնելու միջոցների վերա... կամ մի բրօշուր, մի որ և իցէ յօդուած երեւանց դրա մասին։ Ի՞նչ կարող է լինել աւելի յարմար Ժողովրդին զնապան հարցերի հետ ծանօթացնելու համար և երբ հասարակական դաստիարակութիւնը կարող էր լինի այնքան անհրաժեշտ և կարեւոր ինդիկների պատասխանող լինել, եթէ ոչ այսպիսի դէպքերում։

Թէ հասարակական դաստիարակութիւնները և թէ գիտական յօդուածները պէտք է ի հարկէ կարգացվեն և դրվեն ընդհանուրին մտաչել և դիւրբմունքի լեզուով։ Հարկաւոր եղած ժամանակը եթէ կարելի է նրանց աւելի ծոխացնել, օրինակ, դաստիարակութիւնները զանազան փորձերով և գործիքներով, խակ սոված յօդուածը պատշաճաւոր նկարներով, շատ մեծ օգուտ կարող են բերել այս գործին։ Ահա այսպիսի մտաչել և դիւրբմունքներ կերպով խօսելը և գրելը գիտական

ձեռնի... ձիւ, ձիւ. Մակաիօն միդ բերին։

Ջէր էլի թամալ ուղիլ չէր էկի, ջէր էլի սիւ ու սիւտակ չէր ջօգում, վուր մարթն էլ բիւրանց հարայի հուրախումը տունն ննգաւ...

Մէ ծիւլէք, մէ նեմիս ակնդիւրանց սրտի գնգզնուց ու սրտի գնալ, մէ վարինիկի նիդանալ ու բեղաւորութեան վրա ու բեղաւոր ասակաւանութեան վրա չարանալ, մէ դիւլիէք ու դալմաղալնը, վուր Տէրը թափէ ու Աստուծ ազալէ։

Խաղաւ Մակաիօն մարթը դիւի, դիւի խաղաւ... ոչովի բախիլը չուղից, հանից իր քշիւր ջիւրէմէն դուր քրտնքով հալալ աշխատած փուղերիմէն ինր մաշած ու արորած մանէթ, էրեւսին չպուրցի դիւլիւնանցը, բանից կուր Մակաիօնը ու ծիծաղիլ գէվիլ թրեկից խիղճին, էրկուծղանի արտաւանքները գէվիլ գալիս, վաթտուն ու էրկու. վուրանի մարմար քշիւր սանդուխտը, վուրի վրա դիւլի գնալիս Մակաիօն հէնց դիւլի իրիւնքն էր գնում։

Իս էլ գուտ իմ գալի էրդանց...

Կուլար բիծաւ Ալէքսան էլ քաշքշում, նրա կնիկ վարինկէն էլ, նրա տունն էլ, նրա լօտօն էլ։

Մակաիօն վուր չէր էլի աւատացէր ինձ, իս վուրս էլ չէի տունն դնի էնդի, թաթիլ վարինիկի անկիրը ինձ համա չէ ուրի։

Էս էլ բու ձալի լօտօն, Մակաիօն ջան. էս էլ բու միծաղանքներու փաթիլիէն ու Մալինիէքը։ Միխիկ գալիս իս քու արիւր, Մակաիօն ջան... Իս քիդ լաւ կու հանաքում, քու նազ ու ապիկ սրտի խաւարը գիլիւմ. էս քու մարթն ուտու ու դիւլիցին, էս զաղաւ բէաբուրթներն էլ չիւր դիմաւ...

Չէ թէ ձալի էրեւը, չէ թէ Ալօլալի էրեւը դուռն չիս տեսին, դուռ քու քաշէն էլ չիս դուռ դա հօրէսի գէնը, քու կէկիլմէն ու Նիմուրու մէն էլ կու ամանիւ...

Գնա, նստի քու կարի վրա, քու արտաւանքներով թաց արա մաշարաւ ապրանքը...

Թիֆլիս.

Գ. Սուրգուկեանց

11 Փետրվարի, 1877.

զանազան խնդիրներ վերաժող մեք անուանում ենք ժողովրդագրութիւնը:

Գիտական յօդուածները մեր գրականութեան մէջ նոր բան չեն: Նրանց կարեւորութիւնը միշտ հասկացել են մի քանի մարդիկ և աշխատել են ժողովրդին բնութեանը նրանց հետ. բայց այս նպատակի համար զորք զբաղած միջոցները տնայնական թերի և անհիմն են եղել, որ հազիւ թէ մինչև այժմ իրականութեան մէջ զգացվում է նրանց օգուտը: Այդ յօդուածները գրվում էին այնպիսի անմարտելի և խառն լեզուով, որ հազիւ թէ հասկանալի էին լինում գիտութիւնների հետ ծանօթ մարդկերանցի էլ:

Մեր գրականութիւնը, թէև փոքր առ փոքր, բայց զարթնալ հարստանում է: Գիտութիւնների կողմից մեր գրականութիւնը աւելի զուրկ է քան մի որ և ինչ ուրիշ ծիւղից, մինչդեռ գիտութիւնը թէ մտաւորական և թէ գործնական կողմերով մեծ ազդեցութիւն ունի մարդկային կենցաղավարութեան վերա... Վերջին ժամանակներս եղան մի քանի փորձեր թէ հասարակական դատաստութիւնների և թէ ժողովրդացրած յօդուածներ:

Թէև գիտութիւնը, իբրև գիտութիւն, իբրև արդասիր մարդու մտաւոր զարգացման և հետախուզութեան, շատ մեծ կրթողական նշանակութիւն ունի,—բայց մեր այժմեան դրութեան մէջ և մանաւանդ գիտութիւնը ժողովրդացնելու և հասարակական դատաստութիւնների վերաբերմամբ պէտք է աւելի ուշք դարձնել գիտութիւնների գործնական և անհետական կողմերի վերա:

Մտաւոր Ա. Գալանթաբեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՆ

Թիֆլիս. 17-ն փետր.

«Մշակ» ներկայ տարվայ յունվար ամսի համարներից մէկում արժանախառնակ էֆէնդեանցի տառն և ութերորդ յօդուածի անկատար մնալու մասին խօսելիս, ի միջի այլոց յիշած էի կտակարարի և միւս կողմը ու նպատակները թիւր կերպով կատարվելու մասին: Այս իմ յօդուածն չարժեք մի քանիսն էին նետաբոլորութիւնը և սկզբիցան զանազան տեղերից պահանջել Ներսիսեան ազգային հոգևոր դպրոցից հանգուցեալի տարված կտակարարի: Ի նկատի ունելով այն հանգամանքը, որ հետաքրքիր անձանց չը արվեցաւ բաւականութիւն, կամենում եմ փոքր առ փոքր ասպարէզ հանել կտակարարի կողմերի հակառակ կտակաբարեկամութիւնը ունեցած գործունէութիւնը, որպէս զի քանի որ անհետական ազգի այդ ընդհանուր սեպակաւորութիւնը չը դառնայ այս և այն հոգաբարձուի անհոգութեան և այս ու այն անհատականութեան հանդանալու առարկայ ու խաղալիք:

Կտակարարի կտակի այն յօդուածը, որ վերաբերում է Ներսիսեան դպրոցի ուսումնաւարտ աշակերտներից կատարելագործութիւն ստանալու համար արտասահման ուղարկելուն,—պարզ ասում է՝ որ նախ ուղարկվող աշակերտները պէտք է լինեն խիստ ընտրողութեամբ, և երկրորդ՝ այն նպատակով և պարտաւորութեամբ,—որ նոքա յետոյն նշանակեալ ընթացքը աւարտելուց յետոյ, վերադառնան Թիֆլիս և իւրեանց ուսուցչական պարտաւորութիւնը պիտի մեծապէս Ներսիսեան դպրոցի և կամ ծխական ու միջնակարգ դպրոցներին:

Որքան միտքարտեան և նախկին է՝ այս ասպարէզ բարեկամութեան անհարկոյ նպատակը, այնքան ևս անմիտք և անօրինակ է հոգաբարձութեան առ այս պարտաւորութիւնը ունեցած ստանալութիւնը, որը ոչ մի կերպով իրաւունք չէ տալիս թէ կտակաբարեկամներին և թէ նոյն իսկ հոգաբարձուների սեպակաւորութեանը: Հարցնեմք Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան, թէ որք արժանախառնակ էֆէնդեանցի սաներից (բացի երկուսի) ենթարկվել և խիստ ընտրողութեան թէ նրա թական անապահով դրութեան կողմից և թէ ուսման յատկապէս իրական կողմից. և որք բացի

այ. Չիլեանեանցից հանաչել է իւր պարտականութիւնը, որը ահա ամենաչնչին ուժիկով ի սկի իւր բարեկամութեան, վերադարձած արտասահմանից տեսչի և ուսուցչի պաշտօն է կատարում տեղւոյ Ա. Մարտիմեան օրիորդական դպրոցի առաջին բաժնում, և իւր աշխատութեամբ բարեկարգ դրութեան է հասցրել յիշեալ օրիորդական ամալանալու մասեցած դպրոցը:

Կս գիտեմ, որ հոգաբարձութեան այդպիսի ստանալութիւնը հակում է այս և այն մի քանի Պետրոսների, Մարտիրոսների, Գրիգորների և այլն այլնների անհետական շահերին... այս, առանց կարեկարգ ասում եմ նոյա անձնական շահերին է անհարկում, որպէս զի չանհետանալով դպրոցի պատերից այդ ինտրիգանտները հանգուցեալի սաների երեւալով. ըստ այնմ թէ — օգնելով արեգական, կրօնային աստեղքը: Այլապէս բացատրութիւն չը կայ:

Բայց անկարելի է չը դարձնալ, որ այս տառն և ինքնորոգ դրութեան մէջ հասարակութեան զեկուար անձնակերպ շատերը դեռ այդպիսի համոզման վերա անգործելի կանգնել են. որ մասնաւորի շահերին կարելի է և միանգամայն արդարութիւն է ընդհանուրի շահերը գոհել:

Այս անգամ այս մի յօդուածի բացատրութիւնով բաւականապէս, կաշխատեմ միւս անգամ կտակի յօդուածներից շատերի անկանոն և անիրաւացի կատարվելու բացատրութիւնները տալ:

Ք.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՆ

Թիֆլիս 19 փետրվարի

Ձեր պատուական «Մշակ» լրագրի մէջ (№ 10 1877 թ. և անցեալ տարուայ գեկտեմբեր ամսի համարների մինի մէջ) դուք յայտնել էիք, որ հայ հոգևոր իշխանութիւնը չէ թող տալիս օտարահալածակ հայերին, օրինակ մի քանի թիւրքահալածակ հայ երիտասարդներին, ուսուցչութեամբ պարապել մեր հոգևոր ուսումնաւորներում, և որ այս բանը իբրև թէ հոգևոր իշխանութիւնը անում է առանց մի որ և է օրէնքի, այլ իւր կամակաւորութեան պատճառով: Գրաւ հաստատութեան համար էլ դուք յայտնել էիք, որ նահանգական իշխանութիւնը չէ թիւրքահալածակ հայ երիտասարդներին թող է տուել ուսուցչութիւն անել ուսումնաւարաններում:

Համարութիւնը պարբերու և նորան վերականգնելու համար, ես իբրև թեմական վերականգնող Վրաստանի և իմէրէթի միջնակարգ և ծխական հայ ուսումնաւարանների, պարտաւորութիւն եմ համարում և խնդրում եմ ձեզ տեղի տալ ձեր պատուական լրագրի առաջիկայ համարի մէջ հետեւեալ ցուցման:

1874 թուականի յուլիսի 19 կայացաւ Բարձրագոյն Հրաման հայ հոգևոր ուսումնաւարանների կառավարութեան մասին, որի մէջ պարզ կերպով դրած է հետեւեալ յօդուածը. «այս (հայ-հոգևոր) ուսումնաւարանների մէջ ուսուցչի չնչնը պէտք է լինեն և ուսուցչի հոգաւոր և բարեկամ և ունենան յայտնի բարեյակաւ յատկութիւններ»:

Այս հրամանի զօրութեամբ մեր հոգևոր իշխանութիւնը պարտաւոր է ունենալ իւր ուսումնաւարանների մէջ միայն ուսուցչի հոգաւոր և ուսուցչիներ. Կարծեմ որ կասկած անգամ չէ կարող ծագել, որ իբր թէ չը կայ ոչ մի օրէնք օտարահալածակներին մեր ուսումնաւարաններում չընդունելու մասին, իսկ հոգևոր իշխանութեան վարմունքը չէ կամայականութիւն, այլ օրէնքի ճշտութեամբ կատարելը:

Իսկ ինչ կը վերաբերի նորան, որ նահանգական իշխանութիւնը թող է տուել մի քանի թիւրքահալածակ հայ երիտասարդներին դատաւորութեամբ պարապել, այդ ևս պէտք է հասկանալ այդպէս. ոչ մի իշխանութիւն, յայտնի բան է, չէ կարող գործել օրէնքի հակառակ ուսումնաւարանի իշխանութեան թոյլտուութիւնը չէ վերաբերում մեր հայ հոգևոր ուսումնաւարաններին և թոյլտուութիւն ստացող պարսկահոգևոր ամենալայն իրաւունք չեն ստանում զալ մեր ուսումնաւարանների մէջ գտնաւորութեամբ պարապել, այլ միայն կարող են տեղաբնական միւս ուսումնաւարաններում ուսուցչութիւն անել, որովհետեւ տեղաբնական ընդհանուր օրէնքով օտարահալածակները կարող են դատաւորութեամբ պարապել պետական ուսումնաւարանների մէջ, և ահա այդ ընդհանուր օրէնքի հիման վերա է՝ որ նահանգական իշխանութիւնը,

իրբև ուսումնական կառավարութիւն, արգելք չէ գտել իւր կողմից այդ պարսկների ուսուցչութեան պարապմունքին տեղաբնական ուսումնաւարաններում:

Ուրեմն այս ամենից այն է՝ դուք գալի, որ 1874 թուականի 19 յուլիսի կայացած Բարձրագոյն Հրամանը, իբրև, մասնաւոր օրէնք (сособный закон) հայ հոգևոր ուսումնաւարանների համար, Հայ Հոգևոր իշխանութիւնը պարտաւոր է ճշգրտութեամբ կատարել և ոչինչ բացառութիւն չէ կարող և իրաւունք չունի անել հակառակ այդ օրէնքի. նա անխտիր չէ ընդունում իւր ուսումնաւարաններում ինչպէս թիւրքահալածակներին, այնպէս և պարսկահալածակներին, և առհասարակ օտարահալածակներին, այսուհետեւ ևս չէ ընդունելու և խտրութեամբ պահպանելու է այդ օրէնքը, քանի որ դա՛, այսպէս չէ օրէնքը, չի ստանայ մի որ և է փոփոխութիւն:

Թեմական վերատեսուչ՝
Յակոբ Տէր-Յովհաննիսեան.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՄՈՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են որ անցեալ ամառը այդ մայրաքաղաքում ժողովրդի համար մի առանձին տան մէջ կերակրում էին և մեծացնում էին չլըռամի որդի: Այդ տունը մասշեկի էր ամենի համար. կրկն կրկն կարգացվեցան մանրամասն դատաստութիւններ որի կեանքի, սննդի, մեծանալու վրա: Որդի պատկերը շատ մեծացրած կերպով ցոյց էին տալիս ժողովրդին: Միայն ափոստալ կարելի է, ասում է թղթակիցը, որ սենական փոքրութեան պատճառով կրկնվող ժողոված բոլոր ժողովուրդը չէր կարողանում լսել դատաստութիւնը:

Շնորհակալութեամբ ստացանք ԲԱՅՈՒՆ հրատարակած «Ուրախ Հայաստան» բանաստեղծութիւնների ժողովածուի III-որդ հատորը. ինչպէս յայտնի է այդ ժողովածուի խմբագրի պ. Ա. Գրիգորեանի է:

ԹԻՖԼԻՍԻ Գաղաքային վարչութիւնը յայտնում է ցանկացողներին յանձն առնել կապալով Թիֆլիսի քաղաքի մէջ թ ա փ ա ո ա կ ա ն չ ն ե ր ի ոչնչացնելը՝ դիմել Գաղաքային վարչութեանը (Ապրաւա) գրաւոր յայտարարութեամբ կամ բերանացի յայտնութեամբ մինչև մարտ ամսի 10-ը, ամեն օր առաւօտեան 10 ժամից մինչև 2 ժամ կէսօրի, որտեղ կարելի է ծառայողները գտնաւորի պրօէկտի հետ, որի հիման վրա տրվում է կապալ:

Մեզ գրում են ԲԱՅՈՒՆԻՑ հետեւեալ՝ «Ինչպէս յայտնի է հայր խորէն Ստեփանէ հրաւիրված է Բագուայտեղի Մարտիրոսեան ընկերութեան կողմից, իբրև տեսուչ նոյն ընկերութեան հովանաւորութեան տակ գտնվող երկսեռ ուսումնաւարանների: Հայր խորէնի ազգեցութիւնը աշակերտների վրա շատ մեծ է: Այժմ այդ կարճ միջոցում արդէն նկատվում է մեծ փոփոխութիւն խորէն վարդապետի տեսչութեան տակ գտնվող ուսումնաւարանի դրութեան մէջ: Այդ կարճ միջոցում մտնցվեցաւ ուսումնաւարանում մարտիրոսի և կարգապահութիւն: Տեսուչը ցոյց է տալիս մեծ եռանդ և աշխատասիրութիւն: Ուսումնաւարան և իր ուսումնական ընթացքի կողմից չոչափելի առաջադիմութիւն է ցոյց տալիս: Հայր խորէնը մի քանի ուսուցչներին փոխեց և այդ պատճառով հասկանալի է թէ անբաւականներ էլ կան»:

ԳՐԻՈՒՅԻ մեզ հարցրում են հետեւեալ թեմաները այդ քաղաքի ուսումնաւարանների մասին: «Գորում կան 6 ուսումնաւարաններ՝ ա. Գաւառական (Училищный) ուսումնաւարան, բ. Ժողովրդական օրիորդական ուսումնաւարան, գ. Հայոց արական սեռի դպրոց, դ. Հայոց օրիորդայ ուսումնաւարան, ե. Ուսուցչական սեմինարիա, և գ. Վրաց հոգևոր սեմինարիա: Այս բոլոր ուսումնաւարանների մէջ հայ աշակերտների թիւը հետեւեալ է. Գաւառական դպրոցում սովորում են մօտ 50 հայ երեխայ, Ժողովրդական օրիորդական ուսումնաւարանում 20 հայ օրիորդ, հայոց արական դպրոցում 25 հայ տղա, հայոց օրիորդական դպրոցում 33 հայ աշակերտուհի, և վերջապէս ուսուցչական դպրոցում 15 հայ աշա-

կերտ: Ի հարկէ վրաց սեմինարիայում ոչ մի հայ չը կայ»:

ԳՐԻՈՒՅԻ գրում են մեզ որ այս տարի Գորու հայոց երկսեռ դպրոցների հոգաբարձուների երեք տարվայ ծառայութեան ժամանակամիջոցը լրանալով չուտով պիտի ընտրվեն նոր հոգաբարձուներ: Թղթակիցը ջանքնում է որ հին հոգաբարձուները նորից չընտրվեն:

ԱԼԷԿՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ չարոյակում ենք անգաղար համակներ ստանալ Պարզեանց կալուկապոսի և կոստանեանց քահանայի մասին: Նամակներից մի քանիս զոգում են Պարզեանցին և ցելի մէջ են կրկնում հայր կոստանեանցին, իսկ միւսներ ամենաընտիր խօսքերով Պարզեանցին են հայտնում և կոստանեանցին մինչև երկիրը բարձրացնում: Ասացէք խնդրում ենք, պարսկների թղթակիցներ, միթէ Ալեքսանդրապոլից ուրիշ աւելի հետաքրքիր նիւթ չը կայ գրելու... «Մշակը» չէ կարող զանազան Պարզեանցների, կոստանեանցների, նրանց կուսակիցների, ու նրանց պէս լաւ պտուղների կրքերի խաղալիք դարձալ... Համոզեցէք խնդրում ենք քաղ ճամբարութիւնը և թղթակցէք մեզ հանդիստ ձեր այդ զանազան Պարզեանցներով, կոստանեանցներով և Տէր-Ստեփանեանցներով: Խորհուրդ ենք տալիս Ալեքսանդրապոլի հայ հասարակութեանը իր օրական, կենսական գործերով պարապել, չը յափշտակվել հոգեւորականների ինտրիգան երոյ. չը հետեւել նոյա հոսանքին այլ թղթակցի որ մշտապես ինտրիգաների ծաղաւունքները օրինաւոր կերպով միմեանց միմեան ուսեն, ու կշտանան...:

ՄՈՋԳՈԿԻՑ մեզ գրում են որ փետրվարի 3-ին Ա. Ստեփանեանցը եկեղեցում հանդիպով կատարվեցաւ մեր ազգային նահատակների Ա. Վարդանանց տօնը: Այդ օրը օրիորդայ դպրոցի աշակերտուհիները առաջին անգամ դպրութիւն արին պատարագի ժամանակ: Բայց ցատկ է, ասում է թղթակիցը, որ ժողովրդից շատ քիչերն էին ներկայ գտնվում հանդիպին, չը նայելով որ տօնի նախընթաց կիրակի օրը եկեղեցինքում ծանուցում էր արած առաջիկայ տօնի մասին: Այդ տեսակ անապրբերութիւնը ժողովրդի կողմից գէպի իր ազգային տօները, շատ ցատկի իրողութիւն է, աւելացնում է մեր թղթակիցը:

ՄՈՋԳՈԿԻՑ գրում են մեզ որ այնտեղի արտական դպրոցում զանազան պատճաններով կարճ միջոցով ընդհատված կազմաւարութեան արհեստը, այժմ նորից գործադրվել սկսեցաւ:

ԲԱՅՈՒՆԻՑ գրում են հայոց ուսումնաւարանի ուսուցչի պ. Գ. Երզնկեանցից ստացանք հետեւեալ նամակը մեր լրագրում հրատարակելու համար: «Համանայն դրութեան տեղի ուսումնաւարանական վարչութեան, որ խնդրամատոյց եղաւ ձեզ ուսումնաւարանի ազգային դրութեան պատճառով նախաբար ուղարկել մեզ այս տարվայ «Մշակ» լրագրի թղթակիցը հրատարակութեան կարգով, այժմ կանոնաւոր կերպով ստացվում են անընդհատ: Ուստի պարտաւարանութիւն համարելով իր փոխ վարչութեան հրապարակական շնորհակալութիւն մատուցանել ձեզ, և ցանկանալ որ մեր միւս հայ խմբագիրները, օրինակ առնելով ուղարկութիւն դարձնեն մեր խոցով ուսումնաւարանի վրա, և նոյնպէս, եթէ կարելի է, նախաբար ուղարկեն իրանց հրատարակութիւնները յօդու ուսումնաւարանի»:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՆ

ՀԻՆԵՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐՔՈՒՄԸ

«Հինացք իբրև ժողովուրդ մը Ներսիսեան ամեն կողմերն իրենց նախահարց երկիրը կը դառնան ամենամեծ թերութիւն: Թէ երեսուցէ՛մ և թէ անոր սահմանները ծախու հաւնում են, հոգ ծախու կանուխ Հինեաներն, ծախիները՝ որք անուանապէս կը կառավարեն իրենց խտացեալ երկիրը, ստակի մեծ կարեւորութիւն ունեն. միթէ կարելի չէ՞ որ Հինացք իրենց մէջ տաճկական նոր փոխառութիւն մը ստորադրեն այն պայմանով՝ որ Հինացք իրաւունք ունենան իրենց երկիրը կառավարել, և օրական մեծ տեղութեանց

Խմբագիր — Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ